գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրավված գործին մասնակցող անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն իրավանորմի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Դատարանը, հիմք ընդունելով հայցվորի ներկայացուցչի կատարած աշխատանքների ծավալը, որը սահմանափակվում է հայցադիմումի կազմմամբ և դատարան ներկայացմամբ, գործի բարդության աստիճանը, դատական նիստերի բացակայությունը, որպես փաստաբանի վարձատրության ողջամիտ չափ է սահմանում 200000 ՀՀ դրամը:

Այլ դատական ծախսերի միջնորդություններ չեն ներկայացվել:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12. և 362-րդ հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Հազարաշեն» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 16/62979-24 ծանուցմամբ «Հազարաշեն» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-23/67 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գործարքը անվավեր ճանաչելու վերաբերյալ, բավարարել. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի՝ 2024թ. ապրիլի 11-ի թիվ 16/62979-24 ծանուցումը՝ «Հազարաշեն» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-23/67 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Հազարաշեն» ՍՊ ընկերության բռնագանձել՝

30000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար,

200000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am